«ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, 0025
Սայաթ-Նովա 40/1
Հեռ. (+374) 11 44-44-44
Ֆաքս՝ (+374) 60 44-44-41
Էլ. փոստ՝ info@ucom.am
Վեբ կայք՝ www.ucom.am

"UCOM" LLC
40/1 Sayat-Nova Ave.
Yerevan 0025, Armenia
Phone: (+374) 11 44-44-44
Fax: (+374) 60 44-44-41
E-mail: info@ucom.am
Web: www.ucom.am

Universal Communications

0400148

# Ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների մատուցման պայմանագիր

Ն ՀՀ ՔՆ ԲԸԱՀ-ԾՁԲ-14/23

ք. Երևան «01» հոկտեմբերի 2014թ.

«Յուքոմ» ՍՊ Ընկերությունը, ի դեմս ընկերության կոմերցիոն տնօրեն Արամ Բարսեղյանի, որը գործում է N 002/13 լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ «Օպերատոր», մի կողմից, և ՀՀ քաղաքաշինության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Վարդան Նիկոյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Բաժանորդ», մյուս կողմից (այսուհետ՝ Բաժանորդը և Օպերատորը միասին՝ «Կողմեր», իսկ առանձին՝ «Կողմ»), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր») հետևյալի մասին:

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Օպերատորը պարտավորվում է Բաժանորդին մատուցել ֆիքսված հեռախոսակապի 011621700-011621799 համարաշարքի հեռախոսների տրամադրման և սպասարկման ծառայություն (այսուհետ՝ «Ծառայություն»), որի նկարագրության, քանակի և սակագնային փաթեթի մասին տեղեկությունները ներկայացված են սույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված N1-ում և/կամ Օպերատորի պաշտոնական վեբ կայքում (www.ucom.am), իսկ Բաժանորդը պարտավորվում է վճարել այդ ծառայության համար՝ սույն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

## 2. Ծառայության մատուցման հիմնական պայմանները

2.1. Օպերատորի կողմից մատուցվող Ծառայությունը պատշաճ կերպով ստանալու համար սույն Պայմանագիրը ստորագրելուց հետո անհրաժեշտության դեպքում Օպերատորի կողմից Բաժանորդին է տրամադրվում Սարքը:

2.2. Սույն Պայմանագրի իմաստով «Սարք» է համարվում այն սարքավորումը կամ սարքավորումները, որոնց միջոցով Օպերատորը կազմակերպում կամ մատուցում է իր ծառայությունները:

2.3. Օպերատորի կողմից Սարքը տեղադրելուց, կարգաբերելուց և այն Բաժանորդի տիրապետմանը հանձնելուց հետո Բաժանորդի և Օպերատորի միջև կնքվում է Սարքի հանձնման-ընդունման ակտ:

2.4. Օպերատորի կողմից տրամադրվող Սարքը, մալուխը և դրանց պատկանելիքներն ու մասերը, ինչպես նաև Օպերատորի կողմից դրանց վրա կատարված ցանկացած փոփոխության և/կամ վերանորոգման արդյունք, եթե այլ բան գրավոր կերպով նախատեսված չէ Կողմերի միջև, համարվում են Օպերատորի սեփականությունը:

2.5. Բաժանորդը չի կարող իրեն տրամադրված Սարքը, մալուխը, դրանց պատկանելիքներն ու մասերը վճարովի կամ անհատույց հիմունքներով փոխանցել, վարձակալությամբ տրամադրել երրորդ անձի կամ որևէ փոփոխության ենթարկել: Պայմանագրի լուծման դեպքում Օպերատորի կողմից տրամադրված Սարքը և մալուխը վերադարձվում են Օպերատորին:

2.6. Օպերատորի աշխատակիցների կողմից տեղադրված Սարքերի կարգաբերման, տեղադրման, հանձնման, սպասարկման և այլ անհրաժեշտ աշխատանքների իրականացման բացառիկ իրավունքը պատկանում է Օպերատորի աշխատակիցներին:

2.7. Այն դեպքում, երբ Ծառայությունը մատուցվում է Օպերատորի կողմից տրամադրվող մալուխով, Բաժանորդը պատասխանատու է մալուխի շենք մտնելու և շենքում մալուխի անցկացման թույլտվությունների ձեռքբերման համար:

2.8. Բաժանորդը պարտավորվում է սույն Պայմանագրով մատուցվող Ծառայությունից օգտվել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան:

2.9. Ծառայությունից օգտվելիս Բաժանորդը պարտավորվում է իրեն տրամադրված հեռախոսահամարն օգտագործել այն աշխարհագրական տարածքում, որի համար, համաձայն ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 20.12.2012թ. թիվ 540-Ա որոշման, հատկացված է տվյալ տարածքային կոդը:

## 3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

3.1. **Օպերատորն իրավունք ունի՝**

3.1.1. Բաժանորդից պահանջել ժամանակին վճարելու սույն Պայմանագրով փաստացի մատուցված Ծառայության դիմաց,

3.1.2. Բաժանորդի կողմից սույն Պայմանագրի պայմանների և կետերի խախտման դեպքում միակողմանի հրաժարվել Պայմանագրից և ապամոնտաժել իր կողմից տեղադրված մալուխներն ու Սարքը,

3.1.3. Բաժանորդի կողմից սույն Պայմանագրով սահմանված ժամկետներում չվճարելու դեպքում Բաժանորդից պահանջել վճարելու տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար ամսական վճարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով,

3.1.4. մատուցված Ծառայության դիմաց վերջինիս կողմից պատշաճ վճարումներ չկատարելու դեպքում Բաժանորդին ժամանակավորապես անջատել ցանցից՝ մինչ վերջինիս կողմից գոյացած պարտքի ամբողջական մարումը,

3.2. **Օպերատորը պարտավոր է՝**

3.2.1. Ծառայությունը մատուցել պատշաճ որակով՝ սույն Պայմանագրում ամրագրված պայմաններին և ժամկետներին համապատասխան,

3.2.2. սույն Պայմանագրի գործողության ընթացքում Ծառայությունից օգտվելու համար Բաժանորդին հատկացնել Սարքը և/կամ կատարել համապատասխան ցանցային միացումներ՝ կապված Սարքի տեղադրման հետ,

3.2.3. ողջամիտ ժամկետում անհատույց իրականացնել Սարքի վերանորոգման, վերականգնման աշխատանքները՝ ի հայտ եկած Սարքի արտադրական խոտանի դեպքում, և վերացնել ի հայտ եկած սխալներն ու անսարքությունները, եթե այդ թերությունները գտնվում են Օպերատորի հսկողության տակ,

3.3. **Բաժանորդն իրավունք ունի՝**

3.3.1. պահանջել Օպերատորից Պայմանագրի կնքման պահից սկսած 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում իրեն տրամադրել սույն Պայմանագրի 1.1. կետում նշված Ծառայությունը, եթե Ծառայության տրամադրման ընթացքում ի հայտ չեն եկել անլուծելի տեխնիկական խնդիրներ,

3.3.2. պահանջել Օպերատորից իրեն տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն՝ մատուցվող Ծառայությունից ճիշտ և անվտանգ օգտվելու համար:

3.4. **Բաժանորդը պարտավոր է՝**

3.4.1. ժամանակին և սույն Պայմանագրով սահմանված կարգով վճարել փաստացի մատուցված Ծառայության համար Հավելված N 1-ով նախատեսված ծառայությունների սակագների համապասխան:

## 4. Ծառայության հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Բաժանորդի և Օպերատորի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Օպերատորը Ծառայության մատուցման ավարտից 7 աշխատանքային օրվա ընթացքում Բաժանորդին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված արձանագրության

երկու օրինակ (Հավելված N 2):

4.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Բաժանորդը՝

4.2.1 հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

4.2.2 Օպերատորի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Բաժանորդը արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Օպերատորին է ներկայացնում իր կողմից ստորագրված արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

## *5.* Ծառայությունների մատուցման կասեցումը, դադարեցումը և վերաակտիվացումը

5.1 Օպերատորն իրավունք ունի կասեցնել, սահմանափակել կամ դադարեցնել Բաժանորդին մատուցվող Ծառայությունը՝ առանց այդ մասին վերջինիս ծանուցման, եթե Բաժանորդը՝

5.1.1 օգտագործել է չսերտիֆիկացված և/կամ Օպերատորի ցանցի հետ անհամատեղելի կամ ցանցի պատշաճ աշխատանքին խոչընդոտող սարք,

5.1.2 խախտել է սույն Պայմանագրի պայմանները կամ գործող օրենսդրության պահանջները:

5.2 Բաժանորդի կողմից դիմումում նշված Ծառայության մատուցումը ժամանակավորապես կասեցնելու/դադարեցնելու ժամկետը լրանալուց հետո Բաժանորդին մատուցվող Ծառայությունն ավտոմատ կերպով վերսկսվում է: Եթե Բաժանորդը ցանկանում է ժամանակավորապես կասեցնել/դադարեցնել իրեն մատուցվող Ծառայությունն ավելի քան երկամսյա ժամկետով, ապա նա համապատասխան դիմումը ներկայացնելուց հետո պարտավոր է Օպերատորին հետ վերադարձնել Սարքը՝ կատարելով համապատասխան վճարումներ, եթե այդպիսիք սահմանված են Օպերատորի կողմից, այդ թվում՝ վճարային պարտքը, տույժերը, Օպերատորի կողմից կատարված աշխատանքների և այլ փաստացի կատարված ծախսերի դիմաց վճարները:

## *6.* Ծառայության գինը և վճարման կարգը

6.1 Բաժանորդի կողմից սույն Պայմանագրով սահմանված Ծառայության համար վճարումը կատարվում է Օպերատորի կողմից հաշիվ-ապրանքագիրը ներկայացնելուց հետո 20 (քսան) բանկային օրվա ընթացքում: Ծառայության գինը ներառում է Օպերատորի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Բաժանորդը իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Օպերատորի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

6.2 Սույն Պայմանագրի հավելվածով N 1-ով սահմանված ֆիքսված հեռախոսակապի ծառայության վճարը համարվում է բաժանորդավճար (ամսավճար), որը գանձվում է Բաժանորդից՝ անկախ վերջինիս կողմից տվյալ ամսվա ընթացքում հեռախոսակապի ծառայությունից օգտվելու հանգամանքից, հեռախոսակապի ծառայությունից օգտվելու օրերի կամ նշված ծառայության դադարեցված/կասեցված օրերի քանակից:

## 7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Օպերատորը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

7.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված «Ծառայության նկարագիրը, և սակագները» չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Օպերատորից գանձվում է տուգանք՝ տվյալ ամսվա համար ներկայացված հաշիվ-ապրանքագրի գումարի 0,5 տոկոսի չափով:

7.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Օպերատորից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ տվյալ ամսվա համար ներկայացված հաշիվ-ապրանքագրի գնի 0,05 տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Օպերատորին վճարման ենթակա գումարներից:

7.5 Բաժանորդի կողմից սույն պայմանագրի 6.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Բաժանորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 տոկոսի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7.8 Օրենքի թույլատրելի սահմաններում Կողմերը սույնով հրաժարվում են միմյանց անուղղակի վնասների և բաց թողնված օգուտների հատուցման պահանջներից: Ցանկացած պարագայում Օպերատորի պատասխանատվությունը Բաժանորդի հանդեպ չի կարող գերազանցել Բաժանորդին մատուցվող Ծառայության դիմաց տվյալ ամսվա համար գանձվող ամսական գումարի՝ Օպերատորի մեղքով Ծառայությունից օգտվելու անհնարինության ժամկետին համամասնորեն հաշվարկված գումարը:

7.9 Բաժանորդը պարտավորվում է Պայմանագրի լուծման դեպքում 7 (յոթ) օրվա ընթացքում հնարավորություն ստեղծել Օպերատորի մասնագետների համար ապամոնտաժելու Սարքը, մալուխը, ինչպես նաև դրանց պատկանելիքներն ու մասերը:

7.10 Օպերատորը պատասխանատվություն չի կրում.

7.10.1 դժբախտ պատահարի կամ իր գործընկերների (այդ թվում՝ օտարերկրյա) կամ գործակալների միջոցով փոխանցվող ազդանշանների կամ մատուցվող Ծառայության խափանման կամ դադարեցման հետևանքով առաջացած ընդհատումների, անջատումների, խափանումների կամ որոշակի տեսակի Ծառայության, Սակագնային Պլանների/Փաթեթների մեջ կատարված փոփոխությունների համար,

7.10.2 աշխատանքների, մասնավորապես՝ ընթացիկ, ցանցի ամրապնդման, պահպանման, ընդարձակման կամ վերանորոգման հետևանքով առաջացած ընդհատումների և խափանումների համար, եթե դրանք չեն գերազանցում ամսական 16 (տասնվեց) ժամը:

7.11 Բաժանորդն իրավունք չունի այլ անձի օտարել կամ փոխանցել սույն Պայմանագրով ստանձնած իր իրավունքներն ու պարտականությունները: Բաժանորդն է Օպերատորի համար հանդիսանում միակ պատասխանատուն՝ սույն Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, վճարումները ժամանակին չվճարելու, ինչպես նաև Օպերատորին պատճառված իրական վնասի համար:

7.12 Օպերատորը պատասխանատվություն չի կրում վճարումներն ընդունող միջնորդի կողմից սահմանված կանոնների համաձայն որևէ լրացուցիչ միջնորդավճարի գանձման համար:

7.13 Բաժանորդը պատասխանատու է Սարքի, ինչպես նաև Սարքն օգտագործելու համար հանձնման-ընդունման ակտի հիման վրա իրեն փոխանցված կամ Սարքին միացված սարքավորումների, մալուխների, լարերի և այլ պարագաների համար և դրանց փչացման, սխալ օգտագործման, կորստի, վնասվածքի կամ հափշտակության դեպքում պարտավոր է Օպերատորին փոխհատուցել դրանց դիմաց:

## 8 *Պայմանագրի գործողության ժամկետը*

8.1 Սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից, գործում է անժամկետ Կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ և ուժի մեջ է մնում այնքան ժամանակ, քանի դեռ կողմերից մեկը գրավոր չի հայտնել այն դադարեցնելու մասին:

8.2 Սույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում նշված մատուցվող Ծառայության հասցե/ների փոփոխության դեպքում Բաժանորդը պարտավորվում է առնվազն 15 (տասնհինգ) օր առաջ այդ մասին ծանուցել Օպերատորին:

8.3 Պայմանագրի գործողության դադարեցումը Կողմերին չի ազատում միմյանց նկատմամբ Պայմանագրի գործողության ընթացքում առաջացած պարտավորությունների կատարումից:

## 9 *Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-մաժոր)*

9.1 Սույն Պայմանագրով պարտավորությունները մասնակիորեն կամ ամբողջությամբ

չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, սաբոտաժը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով սահմանված պարտականությունների կատարումը:

9.2 Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավել, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես գրավոր ծանուցելով մյուս Կողմին:

## *10 Եզրափակիչ դրույթներ*

10.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու և կնքելու պահից:

10.2 Պայմանագրի ցանկացած փոփոխություն կամ լրացում կատարվում է գրավոր՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն Պայմանագրի կամ դրա անբաժանելի մաս կազմող հավելված N 1-ի և Օպերատորի պաշտոնական վեբ կայքում սահմանված Ծառայության պայմանների միջև հակասությունների դեպքում կիրառվում են սույն Պայմանագրի պայմանները:

10.3 Կողմերը պարտավորվում են միջոցներ ձեռնարկել մյուս Կողմի կոնֆիդենցիալ տեղեկատվության գաղտնիության պահպանման համար և չհրապարակել այն երրորդ անձանց առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

10.4 Սույն Պայմանագրի շրջանակում Կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի վեճերի լուծումը հանձնել ՀՀ տարածքում իրավասու դատարանի քննությանը:

10.5 Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով 2 (երկու) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

## *11 Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները*

| **Օպերատոր** | **Բաժանորդ** |
|---|---|
| «Յուքոմ» ՍՊԸ | ՀՀ Քաղաքաշինության |
| Իր. հասցե՝ ք. Երևան, Տերյան 19, բն.4 | Նախարարություն |
| Գործ. հասցե՝ ք.Երևան, Սայաթ-Նովա 40/1 | ք. Երևան, Կառավարական թիվ 3 շենք |
| Հեռ.՝ 374 11 444444 | ՀՀ Ֆինանսների նախարարության |
| Ֆաքս՝ 374 60 444441 | աշխատակազմի գործառնական վարչություն |
| ***ՀՎՀՀ 00024873*** | ***ՀՎՀՀ 02565827*** |
| «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ | ***Հ/Հ 900011014355, Հ/Հ 900011014363*** |
| ***Հ/Հ 001-264993-001*** | Աշխատակազմի ղեկավարի |
| | պաշտոնակատար |
| Կոմերցիոն տնօրեն՝ | |
| Հ.Ա. Բարսեղյան | Գ. Նիկոյան |

*Հավելված 1*
*<<01>> հոկտեմբերի 2014թ. կնքված*
*N ՀՀ ՔՆ ԲԸԱՀ-ԾՁԲ-14/23 պայմանագրի*

Իրականացվող ծրագրեր՝

***04. ՀՀ քաղաքաշինության նախարարի աշխատակազմի պահպանում, բաժին 01, խումբ 01, դաս 01***

***01. ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի պահպանում, բաժին 06, խումբ 06, դաս 01***

**«Ծառայության նկարագիրը, և սակագները»**

***1. Տրամադրվող Ծառայությունները և սակագները***

| N | Նկարագրություն | Յուրաքանչյուր հառախոսի ամսավճար (ՀՀ դրամ) | Հասցեներ |
|---|---|---|---|
| 1 | U!Phone Corporate+ | 1500 | ք. Երևան, Կառավարական 3 շենք, և Սարյան 22 |

Ծառայության միանվագ համակցման վճարը կազմում է 860.000 ՀՀԴ ներառյալ ԱԱՀ

Որը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից

- SIP Արձանագրությամբ աշխատող հեռախոսային սարքավորումներ – 480.000 ՀՀԴ
- Ներքին ցանցային մալուխների անցկացում – 240.000 ՀՀԴ
- Հեռախոսային համակարգի ծրագրային թարմացում, վերածրագրավորում – 140.000 ՀՀԴ

*Ընդ որում, 011 աշխարհագրական կոդով տրամադրվող հեռախոսակապի ծառայությունից օգտվելու դեպքում Բաժանորդը կատարվող հեռախոսազանգերի համար վճարում է հետևյալ սակագների հիման վրա.

*Ընդ որում U!Phone corporate + հեռախոսային ծառայության յուրաքանչյուր հեռախոսահամար ներառում է անվճար 360 րոպե խոսելաժամանակ ՀՀ քաղաքային ցանցում:

Նշված հեռախոսահամարները կարող են փոփոխվել՝ ավելանալ և /կամ /պակասել պայմանագրի արժեքի 20% -ի չափով:

*Ընդ որում ծառայությունների ամսավճարը որոշվում է ըստ բաժանորդին փաստացի տրամադրված հեռախոսային ծառայությունների քանակի:

| Հեռախոսազանգերի ուղղություն | Սակագին (ՀՀ դրամ/րոպե) |
|---|---|
| Դեպի 011, 060 և 010 կոդով ֆիքսված հեռախոսակապ | 4 |
| Դեպի ՀՀ մարզերի ֆիքսված հեռախոսային ցանցեր | 14 |
| Դեպի ՀՀ բջջային ցանցեր | 18 |
| Դեպի ԼՂՀ բջջային հեռախոսակապ | 28 |
| Դեպի ԼՂՀ ֆիքսված հեռախոսային ցանցեր | 18 |

**2015 թ-ից հունվարի 1-ից սկսած դեպի ՀՀ մարզերի ֆիքսված հեռախոսային ցանցեր հեռախոսազանգերի ուղղության մեկ րոպեի արժեքը կկազմի 4 դրամ:*

**Օպերատոր**
«Յուքոմ» ՍՊԸ
Իր. հասցե՝ ք. Երևան, Տերյան 19, բն.4
Գործ.հասցե՝ ք.Երևան, Սայաթ-Նովա 40/1
Հեռ.՝ 374 11444444, Ֆաքս՝ 374 60444441
ՀՎՀՀ ***00024873***
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
***Հ/Հ 001-264993-001***

Կոմերցիոն տնօրեն
Ա. Բարսեղյան

**Բաժանորդ**
ՀՀ Քաղաքաշինության
Նախարարություն
ք. Երևան, Կառավարական թիվ 3 շենք
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ ***02565827***
***Հ/Հ 900011014355, Հ/Հ 900011014363***

Աշխատակազմի ղեկավարի
պաշտոնակատար
Վ. Նիկոյան

*Հավելված 2*

*<<------>> .----------. 2014թ. կնքված*

*---------- պայմանագրի*

| Կատարող | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| _____ | _____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

<<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<_____>> 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Կատարողը ի դեմս_____,
հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _____ 20___թ-ից __ _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Աշխատանքների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | | | | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| Ազգանուն, Անուն | Ազգանուն, Անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

0400148

# Համաձայնագիր

## «Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման մասին» թիվ ՀՀ ՔՆ ԲԸԱՀ-ԾՁԲ-14/23 պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ

ք. Երևան «01» դեկտեմբերի 2015թ.

«Յուքոմ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության փոխտնօրեն Արամ Բարսեղյանի, ով գործում է N 002/14 լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ «Օպերատոր», մի կողմից, և ՀՀ քաղաքաշինության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի Էդգար Գևորգյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Բաժանորդ», մյուս կողմից (այսուհետ միասին՝ «Կողմեր», իսկ առանձին՝ «Կողմ»), ղեկավարվելով Կողմերի միջև 01/10/2014թ. կնքված «Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման մասին» թիվ ՀՀ ՔՆ ԲԸԱՀ-ԾՁԲ-14/23 պայմանագրով (այսուհետ՝ «Պայմանագիր»), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին.

1.1. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ի 1-ին կետում նշված աղյուսակը վերաշարադրել հետևյալ կերպ.

| N | Նկարագրություն | Յուրաքանչյուր հեռախոսահամարի ամսավճար (ՀՀ դրամ)* | Հասցեներ |
|---|---|---|---|
| 1 | U!Phone Corporate Special Geo 360 | 1500 | ք. Երևան, Կառավարական 3 շենք |

* Հեռախոսահամարների ցանկը կցվում է սույն Հավելված 1-ին որպես վերջինիս անբաժանելի մաս:

1.2. Հաստատել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ին կից հեռախոսահամարների ցանկը սույն համաձայնագրին կից խմբագրությամբ:

2. Սույն համաձայնագիրը կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման և կնքման պահից:
4. Սույն համաձայնագիրը կազմված է հայերենով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է սույն համաձայնագրի մեկական օրինակ:

**Օպերատոր**

«Յուքոմ» ՍՊԸ
Իրավ. հասցե՝ ք. Երևան, Տերյան 19, բն.4
Գործ. հասցե՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 40/1
Հեռ.՝ +374 11 444444
Ֆաքս՝ +374 60 444441
ՀՎՀՀ 00024873
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ [illegible]
Փոխտնօրեն՝

_____Ա. Բարսեղյան

**Բաժանորդ**

ՀՀ քաղաքաշինության նախարարություն
ք. Երևան, Կառավարական թիվ 3 շենք
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
*ՀՎՀՀ 02565827*
*Հ/Հ 900011014355, Հ/Հ 900011014363*

Աշխատակազմի ղեկավար՝

_____Է. Գևորգյան

«Յուքոմ» ՍՊԸ
«Երևան Պլազա» բիզնես կենտրոն
Գ. Լուսավորիչ 3,
Երևան 0015, ՀՀ
Վեբ կայք՝ www.ucom.am

Հարցերի դեպքում զանգահարեք
444՝ Ucom հեռախոսահամարից
+374 (11) 444 444՝ այլ հեռախոսահամարներից
էլ. փոստ՝ 444@ucom.am

Հարգելի բաժանորդ,

Սույն նամակով հայտնում ենք, որ 2017թ-ի փետրվարի 1-ից «Յուքոմ» ՍՊ ընկերության ֆիքսված և շարժական կապի ծառայությունների դիմաց վճարումները հարկավոր է փոխանցել միայն ներքոնշյալ հաշվեհամարին:

**Վճարումների ճիշտ գրանցումն ապահովելու և ծառայությունների կասեցումից խուսափելու համար խնդրում ենք հետևել վճարումների կատարման կարգին:**

***Ֆիքսված կապի ծառայություններ***

*Վճարումը ստացող բանկ՝*
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570043102134100

*Նպատակ դաշտում պարտադիր նշվող տեղեկություն՝*
Յուքոմ բաժանորդագրման դիմումի (ID) համար idXXXXXXid ձևաչափով:
Ֆիքսված կապի Յուքոմ բաժանորդագրման դիմումի (ID) համարը կարող եք գտնել հարկային հաշվի լրացուցիչ տվյալներ հատվածում:

**Շարժական կապի ծառայություններ**

*Վճարումը ստացող բանկ՝*
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570043102134100

*Նպատակ դաշտում պարտադիր նշվող տեղեկություն՝*
Ucom հաշիվը acXXXXXXac ձևաչափով:
Շարժական կապի Յուքոմ հաշվի համարը կարող եք գտնել բիլինգային հաշվի տվյալներ հատվածում: **Յուրաքանչյուր հաշիվ-ապրանքագրի դիմաց պետք է կատարվի առանձին փոխանցում:**

Հարգանքով՝
Հաճախորդների սպասարկման բաժին

Հարցերի դեպքում զանգահարեք
444՝ Ucom բջջային հեռախոսահամարից
+374 11 444 444՝ այլ հեռախոսահամարներից
էլ. փոստ՝ 444@ucom.am
www.ucom.am

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՒՄՆԱՍԱՆ
Մտից 5/641-17
«31» 01 2017 թ.

«Յուքոմ» ՍՊԸ
«Երևան Պլազա» բիզնես կենտրոն
Գ. Լուսավորիչ 9,
Երևան 0015, ՀՀ
Վեբ կայք՝ www.ucom.am

Հարցերի դեպքում զանգահարեք
444՝ Ucom հեռախոսահամարից
+374 (11) 444 444՝ այլ հեռախոսահամարներից
էլ. Փոստ՝ 444@ucom.am

Dear customer,

Please be informed that starting from 1st of February, 2017 bank payments for Ucom LLC's fixed and mobile services should be performed on the below mentioned bank account.

**Please follow the below steps to ensure payment correctness and avoid service deactivation.**

***For fixed services***

*Beneficiary bank*
Ameriabank CJSC
1570043102134100

*Details field*
Ucom ID number in idXXXXXXid format.
Your Ucom ID number is mentioned in the additional information field in your tax invoice.

***For mobile services***

*Beneficiary bank*
Ameriabank CJSC
1570043102134100

*Details field*
Ucom account in acXXXXXXac format.
Your Ucom account number is mentioned in the "references" field on your bill.
**Please note that a separate payment should be done for each bill.**

Best regards,
Customer Care department

For support call
444 from Ucom mobile number
+374 11 444 444 from any other number.
E-mail: 444@ucom.am